ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-1361[1]-01.07.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 2.1-ին կետով.

«2.1) իրականացնում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասից բխող գործառույթները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Առկա իրավիճակը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է իրավական կարգավորում, որով պարտադիր կսահմանվեր Հայաստանի Հանրապետության պետական դրոշի տեղադրումը Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում: Գործնականում որոշ համայնքներում պետական դրոշներ տեղադրված են համայնքային նախաձեռնությամբ, սակայն միասնական մոտեցում և պարտադիր պահանջ գոյություն չունի:

Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում պետական դրոշը բացակայում է կամ գտնվում է ոչ պատշաճ վիճակում, ինչը չի ապահովում պետական խորհրդանիշների լիարժեք և համաչափ ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հայաստանի Հանրապետության պետական դրոշը պետականության, ինքնիշխանության և ազգային արժանապատվության կարևորագույն խորհրդանիշներից է: Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում պետական դրոշի առկայությունը՝

կուժեղացնի ազգային ինքնագիտակցությունը,

կստեղծի միասնական պետական միջավայր,

կունենա կրթական և դաստիարակչական նշանակություն,

կխթանի պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքը քաղաքացիների և այցելուների շրջանում:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է օրենքով սահմանել, որ Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտք գործելիս պարտադիր պետք է տեղադրվի Հայաստանի Հանրապետության պետական դրոշ:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ նպաստել ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը, ապահովել միասնական պետական խորհրդանշական միջավայր, խթանել պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքի ձևավորումը քաղաքացիների և Հայաստանի Հանրապետություն այցելող անձանց շրջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361[1]-01.07.2026-ՊԻ-011/1) ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1) իրականացնում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասից բխող գործառույթները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/1) ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361[1]-01.07.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԻԾԻ				
1.	Կառավարություն	Հոդված 1	«բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ» ձևակերպումը փոխարինել «բնակավայր տանող միջպետական կամ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ» ձևակերպմամբ:		
2	Կառավարություն	Հոդված 2	«օրենքի 1-ին հոդվածով լրացվող մասով նախատեսված առանձնահատկությունները և կարգը Կառավարությունը հաստատում է» ձևակերպումը փոխարինել «օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է» ձևակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԻԾ				
1.	Կառավարություն	Հոդված 1	Լրացվող կետում վերջակետից առաջ տեղադրել . և » կետադրական նշանները:	Ընդունվել է	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի հիմնավորում	Հիմնավորումը լրամշակվել է:	Ընդունվել է:	Ընդունվել է: